ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

11 հունիսի 2015թ. թիվ 381-Ա

# ՀՐԱՄԱՆ

## «ՄԱՆՈՒՌ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015թ. մայիսի 11-ի թիվ 279-Ա հրամանի հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից իրականացված «Մանուռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2014թ. հունվարի 01-ին տրված թիվ ԽՏ-002 խաղատան կազմակերպման լիցենզիայի պայմանների և պահանջների կատարման ստուգման արդյունքում 2015թ. հունիսի 05-ին կազմված թիվ ԽՏ-01 ակտով արձանագրվել է, որ խաղասրահում շահագործվող մեկ հատ «Սլոտ» տեսակի մեքենայացված խաղ չուներ սերիական համար, մինչդեռ «Մանուռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անհատական գործում առկա շահումով խաղերի վերաբերյալ տվյալներում (ձև 4) չկա առանց սերիական համարի «Սլոտ» տեսակի մեքենայացված խաղ:

Ղեկավարվելով «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետով.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետը խախտելու համար «Մանուռ»

ՖՆ 001860

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք երկու հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Նշանակված տուգանքը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գանձապետական 900005024154 հաշվեհամարին:

3. Նշանակված տուգանքը սույն հրամանն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո՝ ամբողջությամբ կամ մասամբ վճարված չլինելու դեպքում, ենթակա է հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով:

3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ